



171. ՔԱՉԱԼԸ

Ինձիմ ա, լի ինձիմ մին հայի շեն ա ինձիմ Իրանեն թշտին: Էդ շենումը մին քաշալ ա ձրան կնգան նհետ ըպրելիս ինձիմ: Սահանք շատ քյանսիք ըն ինձիմ: Քշալեն խելքն էլ մին քիշ պակաս ա ինձիմ:

Մին օր քաշալը կնգյանը ասում ա.—Ա՛յ կնեգյ, դե վեր լոխ վար ըն անում, եք մուկք էլ լոբի վարինքյ:

Կնեգյը ըստղաս ընդղան, սհանցա-նըհանցա մին խրեգյ լոբի ա օգում, ինքյ օնում: Էտ տարին էլ արաշտ տարի յա ինձիմ: Սահանց բախտը պիրում ա, լանվ լոբի յա փոնում էտ տարի:

Քաշալն ասում ա.—Բա էս լոբին հիշտե՞ղ տանիմ, վեր թանգյ ծախիմ:

Ասում ա.—Տանինքյ Իրանեն շահեն յրն ծախինքյ:

Էշը կանաչ լոբով պեռնում ըն, քյնձիմ շահեն հայաթը, ծեն տամ.—Լոբի, լանվ լոբի:

Շահն ասում ա.—Էտ մզանալ տնազ ըն անում, էս վախտ լոբի լի ինիլ, քյեցեքյ պերեքյ, կլոխը կտրեցեքյ:

Վեզիրը քյնձիմ ա, տեսնում, վեր իսկապես լոբի յա: Կյամ ա շահեն ասում, վեր իսկապես կանանչ լոբի յա: Կանչում ըն, քաշալը կյամ ա, շահը հրցնում ա, ասում ա.—Լոբին քանե՞ յըս տամ:

Ասում աս.—Լորում կյինը մին գող վեսկն յա:

Շահը մտածում աս.—Քա տանք, կասի խնամալ ում շահնն, թա տանք վուշ, կասի էնքան օթ շոնե, վեր լորի ինքյ օնե:

Շահը հրամայում աս, վեր քյնին վեսկնն պիրին, լորին առնին: Քաշալը լորին տամ աս, մին գող վեսկնն յոր օնում, հա վուշեո կյամ բիդի ուրանց շենը:

Քաշալը քյնիլան հտնը շահը շատ աս մտածում, վերջը վիդիրին կանչում աս, թա՛ էտ հալը մեղ խնամալ աս, քյնի հետան հսեր, մին պեն ասե, վեր գյիգավուշ, վեսկնն ինքյ կալ պեր:

Վեդիրն ասում աս.—Հինչ ասիմ:

Շահն ասում աս.—Հրցրու, թա երգյնքյում հինչքա՞ն ասողեր կան:

Վեդիրն ասում աս.—Պա, բալի քթա՞վ:

Շահն ասում աս.—Վեր քթեն, մին էլ հրցրու, թա ըշխարքես մաշ տեղը վե՞րն աս: էտ էլ վեր քթենա, էս աս մին ծի, էս ծին մինին էրկու կյինա՞վ կծախս, վեր դո՞ւզ մին գող վեսկն անե:

Վեդիրը ծին նստում աս, քյնում մին տեղ քշալեն հտնան հըսում, կանչում աս.—Ա՛ք քաշալ, մին պեն ասիմ, թա քթար, վեսկնն քեզ հալալ, թա քթար վուշ, էտ վեսկնն հա պիտի տաս, տանիմ թաքավերեն:

Քաշալն ասում աս.—Լնմ, դե ասե:

Վեդիրն ասում աս.—Երգյնքյում հինչքան ասողեր կան:

Քաշալն ասում աս.—Պա, էդ լ՛հա հա գյուղում ըմ. էս էշխ յում հինչքան մաղ կա, էնքան էլ երգյնքյումը ասողեր կան:

Վեդիրն ասում աս.—Դե մին էլ ասե, ըշխարքես մաշ տեղը վերն ա՞:

Քաշալը մին տեղ վենն աս կենում, ասում.—Հասե՛, ըշխարքես մաշ տեղը էս աս: Վեդիրն ասում աս.—Դե վեր տի յա, թաքավերեն ծին քեզ տամ, վեսկնն ինձ տո:

Քաշալն ասում աս.—Պա թաքավերեն ծին ինձ տանել չի, մեր շենին հըղեն գյուղում չի, թող նստիմ տեսնամ, թա բիդի մեր շենը քյնի, էն վախտը ոաղի կինիմ:

Քաշալը նստում աս թաքավերեն ծին, վեսկնն քցում թարքյա՝ վը, վեդիրն ասում աս.—Շատ հեռե քյնիս վուշ:

Քաշալը նստում աս ծին, շափ քցում, վեսկնն էլ թարքյին կապած, հսնում ուրանց շենը: Շնացիքյ հրցնում ըն.—Քաշալ, էտ ծին, վեսկնն հի՞նչ տեղա յա:

Քաշալն ասում աս.—Լորին շահը յոր աս օնում, տեղը վեսկն

յա տամ, ասորանք ա տամ, վեր մին պեռնը լոբի տանես, մին
պեռնը վեակե կպիրիս:

Սկող տարին ժողովուրթը ցանքաը թողած, եզները պեց ըն
թողնում, ամեգյը մի թե եր կալած տափերը բշտի-բշտի ըն անում,
լոբի վարում: Էդ տարի էլ օնդատն ա ընկած լնվ լոբի յա իննում:
Ժողովուրթը լոբին էշերեն, ծիլերեն, ճորոցը պեռնում, քյնում ըն
շահեն տոռնը, կանշում:

— Ա՛յ լնվ լոբի՛, ա՛յ լնվ լոբի՛:

Վեր շահը լսում ա, շատ ա իննում քշալեն լրա կզնված, հրա-
մայում ա լոխնին կտորին: Շահի հրամանը կատարում ըն, բայց
քաշալն ա օքտվում տրանա, նրա հետե, վեր շենին տերն ու տի-
րականը ինքյն ա մնում:

